<<Հայոց եկեղեցու պատմություն>>

11-րդ դասարան

№ 1-8

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Ի՞նչ պատվիրեց հրեշտակը մոգերին. ***(0.5 միավոր)***

1) Ողջ մարդկությանը հայտնել Հիսուս Քրիստոսի ծննդյան ավետիսը
2) Մանուկ Հիսուսին, Մարիամին և Հովսեփին ուղեկցել Եգիպտոս
3) Իրենց երկրները վերադառնալ այլ ճանապարհով և Հերովդեսին չհայտնել մանուկ Հիսուսի գտնվելու վայրի մասին
4) Հիսուս Քրիստոսի ծննդյան մասին տեղեկացնել Օգոստոս կայսրին

2. Ինչպե՞ս է կոչվում եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը. ***(0.5 միավոր)***

1) Նախատոնակ
2) Տնօրհնեք
3) Հիմնօրհնեք
4) Նավակատիք

3. Գյուտ Ա Արահեզացի կաթողիկոսը հայ ո՞ր մեծանուն գործչին նշանակեց Բագրևանդի եպիսկոպոս. ***(0.5 միավոր)***

1) Ղազար Փարպեցուն
2) Մովսես Խորենացուն
3) Եզնիկ Կողբացուն
4) Եղիշեին

4. Ո՞վ է <<Հաճախապատում ճառեր>> ժողովածուի հեղինակը. ***(0.5 միավոր)***

1) Անանիա Ա Մոկացին
2) Ս. Գրիգոր Լուսավորիչը
3) Ստեփանոս Ասողիկ Տարոնեցին
4) Անանիա վարդապետ Սանահնեցին

5. Պահլավունի տոհմի ո՞ր կաթողիկոսն է գահակալել ամենաերկարը.

(0.5 միավոր)

1) Գրիգոր Բ Վկայասեր
2) Ներսես Դ Շնորհալի
3) Գրիգոր Գ Պահլավունի
4) Գրիգոր Դ Տղա

6. Ո՞վ է. <<Ես գիտեմ, որ ոչինչ չգիտեմ>> արտահայտության հեղինակը.

(0.5 միավոր)

1) Պլատոն
2) Արիստոտել
3) Սոկրատես
4) Հոմերոս

7. Ի՞նչ են խորհրդանշում Խաչքարերի վրա պատկերվող հրեշտակը, առյուծը, եզը և արծիվը. ***(0.5 միավոր)***

1) Երվանդյան, Արտաշեսյան, Արշակունյաց և Բագրատունյաց արքայատոհմերին
2) հյուսիսային, հարավային, արևելյան և արևմտյան կողմերը
3) Մատթեոս, Մարկոս, Ղուկաս և Հովհաննես ավետարանիչներին
4) Մեծ Հայքի Այրարատ, Արցախ, Վասպուրական և Սյունիք նահանգները

8. Ո՞վ է այս խոսքերի հեղինակը. <<Ինքն ամեն ինչ պարունակում է, ամեն ինչի մեջ է, ամեն ինչից վեր է, ամեն ինչից դուրս է, ամեն ինչ նրանով է և ամեն ինչ նրա փառքի համար է>>: ***(0.5 միավոր)***

1) Դավիթ Անհաղթ
2) Ագաթանգեղոս
3) Եզնիկ Կողբացի
4) Գրիգոր Տաթևացի

№ 9-12

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

9. ---------- եկեղեցում գործածվող գրքերից է, որում նշվում են տարվա ընթացքում եկեղեցական տոների օրերը և կատարման կարգը: ***(1 միավոր)***

10. 1889թ. Խորեն Աշըգյան պատրիարքի և Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի ջանքերով հիմնվում է ----------ի դպրեվանքը, որն արևմտահայ իրականության մեջ իր ունեցած դերով և ծավալած գործունեությամբ համարժեք էր Գևորգյան ճեմարանի հոչակին:

(1 միավոր)

**11. Սյունյաց թեմի մետրոպոլիտ Ստեփաբոս Օրբելյանը իր <<----------
---------->> պոեմում բաղձանք էր արտահայտում Վաղարշապատում վերականգնված տեսնելու <<Թագավորի գահն ու կաթողիկոսի աթոռը>>:**

(1 միավոր)

12. Գրիգոր Տաթևացին իր ---------- երկասիրությունում գրում է, որ զենքը թշնամիներին հալածելու համար է, և որ Աստված զինական արվեստի միջոցով մարդուն սովորեցրեց, թե ինչպես թշնամիներից պաշտպանվի: ***(1 միավոր)***

№ 13-14

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից

13. Ստեղծագործությունները համապատասխանեցնել հեղինակների անուններին. ***(1 միավոր)***

1. Հովհաննես Օձնեցի	ա. <<Փիլիսոփայության սահմանումները>>
2. Մխիթար Գոշ	բ. <<Ընդդեմ պավլիկյանների>>
3. Եզնիկ Կողբացի	գ. <<Գիրք հարցմանց>>
4. Դավիթ Անհաղթ	դ. <<Աղանդների հերքումը>>
	ե. <<Դատաստանագիրք հայոց>>

1	
2	
3	
4	

14. Գույները համապատասխանեցնել միջնադարյան աստվածաբան հեղինակների նշած խորհրդաբանական իմաստներին. ***(1 միավոր)***

1. կարմիր	ա. Աստվածային բնության անմատչելիությունը
2. կապույտ	բ. Հանուն մարդու փրկության Քրիստոսի
3. սև	թափած արյունը
4. սպիտակ	գ. Սրբերի մաքրությունն ու անարատ վարքը
	դ. Հրեշտակների առաքինությունը
	ե. Սրբերի ճգնակեցությունը

1	
2	
3	
4	

№ 15-16

Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 5 փաստից

15. Հայոց եկեղեցու ներքոհիշյալ ժամերգությունները դասավորել ըստ կատարման հաջորդականության. ***(1 միավոր)***

ա) Ճաշու
բ) Խաղաղական
գ) Գիշերային
դ) Հանգստյան
ե) Արևագալի

1	
2	
3	
4	
5	

16. Կաթողիկոսների անունները դասավորել ըստ գահակալման հաջորդականության. ***(1 միավոր)***

ա) Մկրտիչ Ա Խրիմյան
բ) Գարեգին Ա Սարգսյան
գ) Խորեն Ա Մուրադբեկյան
դ) Գևորգ Զ Չորեքչյան
ե) Վազգեն Ա Պալճյան

1	
2	
3	
4	
5	

№ 17

Աշխատանք սկզբնաղբյուրով՝ կազմված 2 հարցից

17. <<Ուրախությամբ հանձն առ մահը երկրի համար, ինչպես և քո քաջ նախնիքը, որովհետև դա արդար և Աստծուն ընդունելի գործ է, և երբ այդպես վարվեք, Աստված ձեզ անտես չի անի ... Աստվածապաշտ երկրի համար համարձակ մեռեք, որովհետև հենց այդ մահն Աստծու համար է>>:

(2 միավոր)

1) Ո՞ր պատմիչն է բերված հատվածի հեղինակը: ***(1 միավոր)***

_____

1) Ո՞ւմ խոսքն է հիշատակում պատմիչը: ***(1 միավոր)***

_____

№ 18-19

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ, 2 ճիշտ պատասխանով

18. Թվարկվածներից որ երկուսը կարող են ամուսնալուծության պատճառ հանդիսանալ. ***(0.5 X 2 = 1 միավոր)***

1.Ունեզրկումը
2. Անզավակությունը
3.Ամուսիններից որևէ մեկի յոթ և ավելի տարի անհայտ բացակայությունը
4. Ամուսիններից որևէ մեկի հիվանդանալը
5.Ամուսիններից որևէ մեկի մինչև ամուսնությունը թաքցրած անբուժելի խելագարությունը կամ դիվահարությունը
6. Կենցաղային վեճերը

19. Բերված փաստարկներից ո՞ր երկուսն են ճիշտ: ***(0.5 X 2 = 1 միավոր)***

1) Ամեն տարի մայիսի 26-ին Հայոց եկեղեցին տոնում է Վարդանանց տոնը:
2) Ծաղկազարդի տոնը նվիրված է Գաբրիել հրեշտակապետի կողմից Մարիամ Աստվածածնին հայտնած լուրին:
3) Հայոց եկեղեցին Սուրբ Ծննդյան տոնը տոնում է դեկտեմբերի 25-ին:
4) Վարագա Սուրբ Խաչի տոնը Հայոց եկեղեցին տոնում է սեպտեմբերի 28-ի մերձակա կիրակի օրը:
5) Շողակաթի տոնը նվիրված է Մայր տաճարի նավակատիքի հիշատակին:
6) Պայծառակերպության տոնը նվիրված է քառասնօրյա Հիսուսին տաճար բերելուն:
7) Մարիամ Աստվածածնի Վերափոխման տոնը ժողովրդի մեջ հայտնի է Վարդավառ անունով:

№ 20

Խնդիր-առաջադրանք (2 միավոր)

XX դարի 80-ական թթ. վերջին և 90-ական թվականներին Հայաստանի անրապետություն մուտք գործեցին տարաբնույթ կրոնական հոսանքներ, տոտալիտար աղանդավորական շարժումներ, որոնց ներկայացուցիչները քարոզչական ակտիվ գործունեություն սկսեցին ծավալել: Նորամուտ կրոնական կազմակերպություններից մի քանիսը կարողացան հայ հասարակության մեջ ձեռք բերել որոշ կողմնակիցներ և հետևորդներ:

Հարց.
Որո՞նք էին այն նպաստավոր պայմանները, որոնք հող հանդիսացան աղանդավորական շարժումների՝ Հայաստան թափանցման համար: Հասարակության ո՞ր խավերն անդամագրվեցին այդ կազմակերպություններին և ինչո՞ւ:
Ո՞րն է <<մեկ ազգ, մեկ եկեղեցի>> ունենալու ճանապարհը:

№ 21

Շարադրանք (2 միավոր)

Հիմնավորեք Կաթողիկոսական աթոռը Սսից Հայաստան տեղափոխելու անհրաժեշտությունը: Պատմական ի՞նչ նշանակություն ունեցավ Հայոց կաթողիկոսական աթոռի վերադարձը Էջմիածին: